ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/218

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի,

Մասնակցությամբ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի լիազորված ներկայացուցիչներ՝ Գ. Մանուկյանի և Կ.Բալայանի (լիազորագիր տրված՝ 28.12.2018թ.):

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24108-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 19.12.2018թ. թիվ 1/18-2/80068-18 գրության հիման վրա, 25.12.2018թ. թիվ 27/26-3/24108-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/218 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.12.2018թ. թիվ 1/18-2/80068-18 գրությամբ հայտնել է, որ համաձայն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և (այսուհետ՝ Գնորդ) և «ՌՎ Պրոջեկտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 22.05.2018թ. կնքված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.3-րդ կետի՝ Վաճառողը պարտավոր էր Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք: Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է դարձել, որ Գնորդին հանձնվելու է երրորդ անձանց իրավունքներից ոչ ազատ ապրանք և չի տրամադրվելու ապրանքի որակը հավաստող և պայմանագրով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է նաև այն հանգամանքը, որ մատակարարվելու է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք: Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում

արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, մասնավորապես Պայմանագրի 2.4.3-րդ, 8.3-րդ կետերը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 13-ից միակողմանի լուծել է 2018 թվականի մայիսի 22-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնման պայմանագիրը»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ կից ներկայացվում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հիշյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/218 ընթացակարգի շրջանակներում 28.12.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդեցին վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/218 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/218 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 22.05.2018թ. կնքվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

3. Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

4. Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

5. Պայմանագրի 2.4.3 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է՝ Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

6. Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության

կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7. Ընկերությանն ուղղված 13.12.2018թ. թիվ 15-7/[1880732]-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «ՌՎ Պրոջեկտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 22.05.2018թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.3-րդ կետի՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք: Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է, որ Գնորդին հանձնվելու է երրորդ անձանց իրավունքներից ոչ ազատ ապրանք և չի տրամադրվելու ապրանքի որակը հավաստող և պայմանագրով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է նաև այն հանգամանքը, որ մատակարարվելու է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք: Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի

կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը շարադրվածը, մասնավորապես Պայմանագրի 2.4.3-րդ, 8.3-րդ կետերը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 13-ից միակողմանի լուծում է 2018 թվականի մայիսի 22-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնելով, որ Պայմանագրի 6.3 կետի համաձայն «ՌՎ Պրոջեկտ» ՍՊԸ-ից կգանձվի 23450 ՀՀ դրամ տուգանք:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24108-18 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 19.12.2018թ. թիվ 1/18-2/80068-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի միջև 22.05.2018թ. կնքվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն) պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

Պայմանագրի 2.4.3 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է՝ Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ընկերությանն ուղղված 13.12.2018թ. թիվ 15-7/[1880732]-18 գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «ՌՎ Պրոջեկտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 22.05.2018թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.4.3-րդ կետի՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք: Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է, որ Գնորդին հանձնվելու է երրորդ անձանց իրավունքներից ոչ ազատ ապրանք և չի տրամադրվելու ապրանքի որակը հավաստող և պայմանագրով պահանջվող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը:

Առձեռն ներկայացված փաստաթղթերից պարզ է նաև այն հանգամանքը, որ մատակարարվելու է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք: Պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը շարադրվածը, մասնավորապես Պայմանագրի 2.4.3-րդ, 8.3-րդ կետերը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2018 թվականի դեկտեմբերի 13-ից միակողմանի լուծում է 2018 թվականի մայիսի 22-ին կնքված թիվ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով պայմանագիրը:

Այսպիսով, Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

Պայմանագրի 2.4.3 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է՝ Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ընկերության միջև 22.05.2018թ. կնքված ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով «Պետության կարիքների համար մասնագիտացված ծառայողական շների» մատակարարման պայմանագրի շրջանակներում խախտել է Պայմանագրի 2.4.3-րդ կետը,

այն է՝ Ընկերությունը պարտավորվել է Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք, սակայն վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ Գնորդին հանձնվելու է երրորդ անձանց իրավունքներից ոչ ազատ ապրանք, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.12.2018թ. թիվ 27/26-3/24108-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02671392) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**